

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Ք Ի Ե Վ Ի Ո Ւ Խ Տ Ա Ւ Ո Ր Ն Ե Ր Ը .

Ռուսաց լրագիրներէն մէկուն հաշուովը, Քիեվ քաղաքը ուխտի գնացողներուն թիւը 170 հազարէն աւելի է՝ պակաս չէ՝ մէկ տարուան մէջ: Այս թիւը կապկսի պատերազմի եւ փոխադրական հիւանդութեանց ժամանակ. իսկ սովի ատեն կաւելնայ կըսէ: Ուխտաւորաց մեծ մասը Ռուսաստանի միջին նահանգներէն են, բայց մինչեւ Քամչաթքայէն ու Սիպիրի ուրիշ կողմերէն եկողներ շատ կան:

Այնչափ բազմութեան հարիւրին 90-ը աղքատ է. եւ սոքա շատ անգամ իրենց ունեցած չունեցածը ճանապարհորդութեան կձախեն, եւ կամ բոլոր ճանապարհը մուրացկանութեամբ կընեն. ուստի եւ ուխտաւորաց շատ եղած տարին՝ Քիեվ քաղաքը մեծ թանկութիւն կլինի կերակրելինաց, եւ առատութիւն գողութեանց եւ աւազակութեանց: Յետոյ կհարցընէ լրագիրը թէ արդեօք այն ուխտաւորաց մէջ քանի՞ն կայ որ միայն բարեպաշտական ջերմեռանդութեամբ գայ աղօթք ընելու, ինքզինքը շտկելու եւ ապաշխարելու: — Կարելի է, կըսէ, այն ուխտաւորաց մեծ մասը

սը այս երեք խումբերէն մէկուն կամ մեկալին տակը ձգել. ա, յիւրաւի բարեպաշտ մարդիկ՝ որ աղօթք ընելու կերթան, կամ ապաշխարութիւն մը ունին ընելու. յ, ուխտ ընողներ՝ որ կերթան իրենց ուխտը կատարելու, գ, դատարկաշնչիկ պարապորդ մարդիկ՝ որ աշխարհք տեսնելու կը պտըտին: Սոցա մէջ ո՞ր խումբն աւելի բազմաթիւ լինելը դժուար է որոշել. բայց յայտնի բան է որ շատը հաւատոյ բաներուն տեղեկութիւն չունենալով, դրած են իրենց միտքը թէ ուխտի երթալը հոգւոյ փրկութեան մի միայն ճանապարհ է, եւ նոյն իսկ ճանապարհորդութեան մէջ առանց քաշուելու իրենք զիրենք գողութեան ու անառակութեան կուտան, յուսալով թէ ամէն բանի *խառքիւնը* Քիեվի մէջ կգտնեն: Այսպիսի ուխտագնացութեանց բնական հետեւանքներէն մէկը աղքատութիւնն է, մէկն ալ ընտանիքը երեսի վրայ ձգել, բանէ գործէ պաղիլը, որով ողջ առողջ մարդիկ կվարժին մուրացկանութեամբ ապրելու. անով երեսներնուն ամօթն ալ կկորսնեն, եւ գողութիւնն ու աւազակութիւնը սովորութիւն կդառնայ իրենց:

ՆԵԼԱԹՈՆ ՎԻՐԱՅՈՅԺԸ ԵՒ ԿԱՐԻԱԿԱԼՏԻ.

Գաղղիոյ մեծանուն վիրաբոյժը՝ Պարոն Նելաթոն երբ Սփեյիա երթալու եղեր էր՝ Կարիպալտին տեսնելու, ճանապարհ ելնելէն առաջ տեսնուեցաւ Տրուէն տը Լիւիս ոստիկանին հետ, ու զարմացաւ այն մեծարանացը վրայ զոր Գաղղիացի իշխանաւորը ցըցուց Խտալիոյ ազատարարին: Նելաթոն անցագիր (*passaport*) որ խնդրեց, ոստիկանը պատասխան տուաւ թէ՝ «Ձեզի անցագիր հարկաւոր չէ. բաւական է որ իմացընէք թէ այն գերադուրէն վիրաւորը բժշկելու կերթաք»: Նելաթոն Կարիպալտին սենեակը մտնելուն պէս՝ Կարիպալտին ըսաւ թէ «Պարոն Նելաթոն, ի՞նչ պէս սիրտ ըրիք այնչափ հեռու տեղէ գալու որ ինծի պէս խռովարարին բժշկութիւն ընէք: — Ոչ, ըսաւ վիրաբոյժը, ես անոր համար եկայ որ մեծանուն հիւանդի մը իմ ծառայութիւնս մատուցանեմ»:

Յետոյ Նելաթոն պատմեց Կարիպալտին ի՞նչ խօսակցութիւն որ ունեցեր էր Տրուէն տը Լիւիսին հետ անոր համար: — Այսպիսի դիպուածները եւ խօսքը ասո՞ր միայն նշան են թէ եւրոպայի մէջ հասարակաց համարումը Կարիպալտին վրայ դարձեալ մեծ է. բայց շատ կը սխալի ով որ այն համարմունքէն կամ ասոնց նման խօսքերէն կհետեւցընէ թէ ուրեմն Գաղղիոյ տէրութիւնը Կարիպալտին ձեռք պիտի բռնէ... ուրեմն Գաղղիան Խտալիոյ ազատութիւնը կուզէ... ուրեմն Տրուէն տը Լիւիսը պիտի աշխատի Հռոմէն Գաղղիացի զօրքերը ետ կանչել տալու, եւ այլն: Ով որ Գաղղիացուց ազգն ու Գաղղիոյ քաղաքականութիւնը իրարմէ զանազանել աղէկ գիտէ, նա միայն ազատ կմնայ այնպիսի խաբէական նախապաշարմունքէ: